



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(31 Մարտ 1991 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ».

Սիրեցեալ հաւատացեալ ժողովուրդ Մեր,

Այս առաւօտ առաւ լոյսի մէջ շողում են մեր աղօթքի տաճարները
և յաղթական դողանջում մեր եկեղեցիների զանգերը, աշխարհին աւետե-
լով մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հրաշք յարութիւնը: Այս առաւօտ լոյսով
լցւում են նաև մեր բոլորի հոգիներն ու բացւում՝ մեր պայծառ յոյսերի, մեր
արդար սպասումների դռները:

Այս տարի ևս, անցնող քառասուն օրերի ընթացքում փորձեցինք մեր
տկար ուժերով քայլել Յիսուսի տառապանքների հետքերով, դէպի Գողգո-
թա, անմար տենչանքով, որ պահեցողութեան, ապաշխարութեան ու աղօթ-
քի ճիգերով, նաև մեր բարի գործերով, մեր խաչը կրենք առանց տրտունջի,
Տիրոջ յարութեան շնորհներին ու անանց կեանքի տեսիլքին արժանանալու
երազանքով:

Սուրբ Զատիկի տօնախմբումը ամէն տարի, մեզ բոլորիս, ամէն քրիս-
տոնեայի ընծայում է՝ հոգուց ներս դիտումի պահը, խոկումի պահը, այս
անցաւոր ու յաճախ տանջալի կեանքի իմաստի մասին, մեղքի կապանքնե-
րից ազատուելու մասին, մահից յետոյ հեռու՝ խաղաղ արքայութեան աշ-
խարհում նոր կեանք ապրելու մասին: Այս հրաշալի տեսիլքն է, որ առաջ-
նորդում է մեզ բոլորիս, հասնելու համար քրիստոնէական ապրումի գերա-
գոյն կատարին: Նոյնիսկ Հին Կտակարանում տեսնում ենք այդ տեսիլքի
նառաջադրումը: Յիշենք Եսայի մեծ մարգարէի ներշնչուած խօսքը՝ «Յարի-
ցեն մեռեալք և կանգնեցին որ իցեն ի գերեզմանս, և ուրախ եղիցին յերկ-
րի, զի ցողդ որ ի քէն է, բժշկութիւն է նոցա» (Ես. ԻԶ. 19):

Բայց մանաւանդ ունենք Յիսուսի հոգեցունց վկայութիւնը՝ «որ զբանն
իմ լսէ և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենա-
կանս» (Յովհ. Ե. 24): Իսկ Պօղոս առաքեալը իրեն յատուկ վճռական ստու-
գութեամբ հաստատում է մեծ յոյսը՝ ասելով. «Արդ, Քրիստոս յարուցեալ է
ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց. Բանգի մարդով եղև մահ և մարդով՝
յարութիւն մեռելոց» (Ա. Կորնթ. ԺԵ. 20):

Հետևաբար, սիրելի հաւատացեալներ, տոգորուած այս աստուածապարզ փրկարար յոյսով, ճշմարտապէս ուրախանանք ու հրճուենք Քրիստոսի յարութեան աւետիսի փաշտականումով մեր հոգիներից ներս, որը լուսաւորում է մեր կեանքն ու մխիթարում մեր սրտերը:

Տիրոջ հրաշք յարութեան աւետիսը թափանցում է մեր ողջ էութեան մէջ և համակում մեզ մի խորհրդաւոր սարսուռով, աներևոյթ թելերով մեզ միացնում է մեզ հետ աղօթող մեր հաւատակից եղբայրների ու քոյրերի հետ, նոյն հոգեցունց ապրումների մթնոլորտում: Ու աւելին, նոյն այդ ապրումների աշխարհում մենք մեզ զգում ենք միացած նաև մեր հաւատաւոր նախնիների հետ, որոնք գերեզման իջան յարութեան տեսիլքը իրենց մարտող աչքերում:

Արդարև, Աստուած է վկայ, որ մեր Փրկչի Յիսուսի խաչելութեան ու յարութեան աշխարհաստան խորհուրդը հանդիսացել է հոգևոր ստուգութիւնը մեր հաւատաւոր նախնիների՝ դարեր ու դարեր շարունակ: Ստուգութիւնը, մահուամբ հասնելու՝ անանց կեանքի ափին, զոհաբերումով՝ յաղթութեան, տրտմութեամբ ու տքնութեամբ՝ ուրախութեան:

Յաւերժ ապրելու յաս հրաշք երազով, այս արարչատես հաւատքով նրանք հեռացան արցունքի հովիտ այս աշխարհից, յետագայ սերունդներին և մեզ այսօր ապրողներին թողնելով մեծագոյն ժառանգութիւնը, այն է՝ մահը յաղթելու ուժը և յաւերժ ապրելու յոյսը, ժամանակից դուրս, կեանքի միւս ափին:

Այս ապրումների մէջ հոգեսուզուած, մեր օրերի ազգային վերակերտման փոթորկումների ու վտանգների առաջ կանգնած, առաւել խորն ենք զգում, որ սուրբ յարութեան շողարձակումը տարածում է բոլորիս, այսօր ապրող ու մարտնչող մեր ժողովրդի բոլոր զաւակների վրայ, որոնք գուցէ աւելի քան երբեք, գտնում են մեծ ճշմարտութեանց լոյսի ներքև, քրիստոսաւանդ արդարութեան ու ազատութեան իրենց Գողգոթայի ճանապարհին:

Խաչեալ և թաղեալ Աստուածորդու յարութեան տօնախմբումը մեր ժողովրդին ընծայում է այսօր նաև քաղցր բերկրանքը մէկը միւսին ողջունելու մեծ աւետիսով, մէկը միւսի հետ ողջագորութելու եղբայրական սիրով ու հոգևոր զօրակցումով: Զի Քրիստոսի յարութեան բարի լուրը, նաև սրտառույշ մի կոչ է մեր հաւատակից քոյրերին և եղբայրներին, բոլոր հաշորդիներին անխտիր, համերաշխօրէն, միատեղ ու միակամ մասնակից դառնալու մեծախորհուրդ ուրախութեանը՝ յաւերժական կեանքը ժառանգելու: Լսենք Սուրբ Յովհաննէսի աննման պատգամը՝ «Եթէ սիրեսցուք զմիմեանս, Աստուած ի մեզ բնակէ, և սէր նորա ի մեզ կատարեալ է ...Եթէ ոք ասիցէ եթէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես՝ զի ա՛րդ կարիցէ սիրել» (Ա Յովհ. Գ. 12 և 20):

Այդ արարչագործ սէրը առ Աստուած և դէպի մեր նմանները, ազնուացնում է ու պայծառակերպում մեր մտածումները, մեր զգացումները, մեր ձեռաց գործերը, որոնք իմաստ ու արժէք և նպատակ են տալիս մեր երկրաւոր գոյութեանը ու լուսաւորում մեր կեանքի ուղին, ջերմացնում մեր սրտերը, բազմապատկում մեր ուժերը, բարին ու արդարը արարելու մեր առաքելութեան ճանապարհին:

Ահաւասիկ այն խոհերն ու յոյզերը, որ ապրում ենք այս Զատկի լուսաբացին, որոնք մեր ազգի բոլոր զաւակների երազանքներն են այս տազնապալի ժամանակներում: Կանգնած Յիսուսի դատարկ գերեզմանի խոր-

հրդի առաջ, մի անգամ ևս խոստովանենք մեր հաւատքը, թէ՛ «նշարտապէս յարեալ Քրիստոս», մի անգամ ևս խոստովանենք մեր ժողովրդի եղբայրական միասնութիւնը նոյն արդար երազանքների կենսագործման ճանապարհին, մի անգամ ևս խոստովանենք մեր յոյսը նշարտութեան յաղթանակի, համոզուած լինելով, որ «լոյս արդարոց յամենայն ժամ, լոյս ամբարշտաց շիջցի» (Սողմ. ԺԳ. 9):

Սիրելի հաւատացեալներ, որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, բերկրեալ սրտերով տօնախմբեցէք ուրախութիւնը Յարութեան, քաղցրութիւնը եղբայրսիրութեան, ու անշէղ վառ պահեցէք ձեր յուսացեալ հոգիներում, ազատութեան ու արդարութեան յաղթանակի ստուգութիւնը, բարու ուժերի յաղթութիւնը ընդդէմ չարի ու մահուան:

«Ձի Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իրով մեզ զկեանս պարգևեաց». ամէն:

